Հաստատված է՝

«Գավառի ակ. Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ -ի
Խորհրդի կողմից 20 թ. 14.11.2024 թիվ 19 նիստում
Խորհրդի նախագահի տեղակալ՝
S. Գայրանյան S.Գայրանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# «ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա.ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2024

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույնով սահմանվում է «Գավառի ակադեմիկոս Ա..Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ) գործունեության ներքին գնահատման և հաշվետվության կանոնակարգը:

2.Սույն կանոնակարգը սահմանում և հաստատում, ինչպես նաև դրանում լրացումներ և փոփոխություններ կատարում է Քոլեջի Կառավարման խորհուրդը՝ տնօրենի առաջարկությամբ:

3. Կանոնակարգը ուժի մեջ է մտնում Քոլեջի Կառավարման խորհրդի հաստատումից և տնօրենի վավերացումից հետո:

# 2. ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

2.1. Քոլեջի գործունեությունը բխում է Քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրից (այսուհետ՝ ՌԾ):

2.2.Ներքին գնահատումը ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով իր գործունեության և սահմանված նպատակներին ու վերջնարդյունքներին կրթական գործընթացի համապատասխանության վերլուծությունն է:

2.3.Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը:

2.4.Ներքին գնահատման հանձնաժողովի կազմում կարող են ընդգկվել վարչատնտեսական և մանկավարժական աշխատողներ, ուսանողներ, պրակտիկաների և ԱՀՈՒ-ի իրականացմանը մասնակից գործատուների ներկայացուցիչներ:

2.5.Ներքին գնահատման հաշվետվությունը Քոլեջի տնօրենը մինչև նոր ուսումնական տարվա սեպտեմբերի 15-ը ներկայացնում է Քոլեջի Կառավարման խորհուրդին:

2.6.Ներքին գնահատումն իրականացվում է ուսումնական հաստատության տնօրենի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովի կողմից, որի կազմում ընդգրկվում են առնվազն 7-անդամներ՝ 6+1:

Տնօրենը հանձնաժողովի նախագահն է և ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

Հանձնաժողովը հաստատում է իր աշխատակարգը և նախապատրաստում է ներքին գնահատման հաշվետվությունը:

2.7.Ներքին գնահատման գործընթացի ավարտից հետո հանձնաժողովի նախագահը ներկայացնում է ներքին գնահատման հաշվետվությունը:

# 3. ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1 Քոլեջի գործունեության ներքին գնահատման նպատակն է՝

1) նպաստել Քոլեջի կրթության որակի շարունակական բարելավմանը և արդյունավետության մակարդակի բարձրացմանը,

2) կրթական ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանը,

3) բարձրացնել ներքին և արտաքին շահակիցների շրջանում Քոլեջի գործունեության վերաբերյալ իրազեկվածության մակարդակը,

4) նպաստել Քոլեջի հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը, գործունեության թափանցիկության ապահովմանը:

3.2 Քոլեջի գործունեության ներքին գնահատման խնդիրներն են՝

1) գնահատել կրթական ծառայությունների որակը և արդյունավետությունը,
2) գնահատել պետական կրթական չափորոշչի վերջնարդյունքների պահանջներին համապատասխան շրջանավարտների գիտելիքները, կարողությունները և հմտությունները,
3) գնահատել ուսումնական գործընթացի կազմակերպման պայմանները և դրանց բարելավմանն ուղղված աշխատանքները,
4) գնահատել կրթական ծրագրերի իրականացման, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը,
5) ապահովել մատուցվող կրթական ծառայությունների որակի համապատասխանության և կրթական գործընթացի արդյունավետության մասին ներքին և արտաքին շահակիցների իրազեկվածություն,
6) գնահատել Քոլեջի զարգացման առաջնահերթությունները, զարգացման ծրագրերի մշակումն ու իրականացումը,
7) ապահովել Քոլեջի տվյալ ուսումնական տարվա գործունեության արդյունքների համադրելիությունը և զուգորդումը այլ ուսումնական տարիների արդյունքների հետ։